Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում նկարագրական վիճակագրության եղանակները, սահմանում մաթեմատիկական վիճակագրության հիմնական խնդիրը և հասկացությունները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ընդհատ վիճակագրական բաշխման ֆունկցիայի իմաստը և նշանակությունը.</p> <p>գ. ճիշտ է կատարում ընդհատ վիճակագրական տվյալների՝ ըստ հաճախությունների սյունապատկերումը.</p> <p>դ. ճիշտ է կառուցում ընդհատ վիճակագրական բաշխման բացարձակ կամ հարաբերական հաճախականությունների բազմանկյունը.</p> <p>ե. ճիշտ է կառուցում ընդհատ վիճակագրական բաշխման ուղղաձիգ կամ հորիզոնական ձողիկներով գծապատկերը.</p>

<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<b>Իմանալ բաշխման վիճակագրական գնահատման սկզբունքները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում վիճակագրական մոդելները և նրանց ներկայացվող պահանջները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում «գնատու» հասկացությունը և դրանց ներկայացվող պահանջները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում փոքրագույն քառակուսիների եղանակը.</p> <p>դ. փոքրագույն քառակուսիների եղանակով ճիշտ է կատարում ընդհատ պատահական մեծության վիճակագրական տվյալների մոտարկում.</p> <p>ե. ճիշտ է կատարում ընդհատ պատահական մեծությունների վիճակագրական տվյալների մշակում և վերլուծություն:</p>
<b>Մոդուլի անվանումը «ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-010
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ ընդհանուր գիտելիքներ կենսագործունեության անվտանգության, «մարդ-մեքենա-միջավայր» համակարգի, վտանգավոր և վնասակար արտադրական գործոնների բնութագրերի և առողջ ու անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծման, կենսագործունեության անվտանգությանը վերաբերվող նորմատիվային իրավական ակտերի, ծառայության կառուցվածքի, աշխատատեղերի օդերևութաբանական և միկրոկլիմայական պարամետրերի նորմերի վերաբերյալ, , ինչպես նաև ձևավորել դրանց չափման և հսկման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաները միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծրագրով նախատեսված ծավալով և ԱՅԱԽ 04-09-003 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:

<p><b>Ուսումնառության արդյունք 1</b></p>	<p><b>Իմանալ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ հնարավոր վնասվածքների տեսակները</b></p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքները և դրանց պատճառները, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- էլեկտրահարումներ,</li> <li>- տեսողության և մաշկի բաց մասերի վնասվածք քիմիական նյութերից, էլեկտրական աղեղի ճառագայթումից,</li> <li>- այրվածքներ հալած մետաղի և խարամի կաթիլներից,</li> <li>- օրգանիզմի թունավորում աշխատանքների ընթացքում առաջացած վնասակար գազերից,</li> </ul> <p>բ. նորոգման և վերականգնման աշխատանքներ իրականացնելիս ճիշտ է օգտվում անհատական պաշտպանիչ միջոցներից և արտահագուստից,</p> <p>գ. ճիշտ է կատարում բանվորների (արհեստավորների) հրահանգավորումը աշխատանքի անվտանգության և առողջության պահպանության վերաբերյալ:</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p><b>Իմանալ նորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացնելու համար կիրառվող սարքերի և սարքավորումների աշխատանքի անվտանգության կանոնները, կատարել հողանցման, փոխադրասարքերից, հակահրդեհային պարզագույն միջոցներից օգտվելու գործողություններ</b></p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում նորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացնելիս աշխատատեղը մաքուր է պահելու, սարքավորումներն ու մեխանիզմները հուսալի է միացնելու կանոնները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում նորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացնելիս էլեկտրասարքավորումները տեղադրելու, դրանք խոնավությունից և ջրից պաշտպանելու, մեխանիկական ազդեցություններից մեկուսացնելու կանոնները,</p> <p>գ. կարողանում է կատարել նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ կիրառվող էլեկտրասարքավորումների հողանցումը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում նորոգման և վերականգնման աշխատանքը սկսելուց առաջ օգտագործվող էլեկտրական հաղորդալարերի սարքին և մեկուսացված վիճակում լինելու պահանջները,</p>

	<p>ե. ճիշտ է ներկայացնում նորոգման և վերականգնման ժամանակ կիրառվող ծակող և կտրող գործիքներից օգտվելու կարգը,</p> <p>զ. նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ ճիշտ է օգտվում սայլակներից կամ հատուկ ամրակներից՝ ագրեգատները կամ հանգույցները տեղափոխելու համար,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային անվտանգության կանոնները և ցուցադրում հրդեհի մարման պարզագույն միջոցների (կրակմարիչ, բահ, թաղիքե ծածկեր, ավազի պարկեր) կիրառման գործողությունները:</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p><b>Արդյունավետ կիրառել նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ առաջացած վնասակար նյութերից, գազերից, ճառագայթումից և այրվածքներից պաշտպանվելու միջոցներ</b></p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է որոշում սահմանափակ տարածքներում աշխատանքներ կատարելիս հարկադրաբար արված օդափոխության բավարար աստիճանը, համոզվում է, որ հերթապահ դիտորդը ներկա է,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում պաշտպանական միջոցների՝ վահանակի, դիմակի, պաշտպանիչ ակնոցի ու լուսազտիչի, սաղավարտի, հատուկ արտահագուստի և ձեռնոցների օգտագործման կարգը և ցուցադրում այն,</p> <p>գ. ճիշտ է կատարում բանվորների (արհեստավորների) հրահանգավորումը անհատական պաշտպանության միջոցներից օգտվելու վերաբերյալ:</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 4</b></p>	<p><b>Իմանալ կենսագործունեության անվտանգության բնագավառին վերաբերվող նորմատիվ իրավական փաստաթղթերը, հիմնական օրենսդրական ակտերը և համապատասխան ծառայության կառուցվածքը,</b></p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի անվտանգության և աշխատողների առողջության պահպանության վերաբերյալ ՀՀ-ում գործող նորմատիվային իրավական ակտերի պահանջները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման ժամանակ գործող աշխատանքի անվտանգության կանոնները և այլ նորմատիվային իրավական ակտերի պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների սպասարկման ժամանակ գործող աշխատանքի անվտանգության կանոնները և այլ նորմատիվային իրավական ակտերի պահանջները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում կազմակերպության աշխատանքի անվտանգության և աշխատողների առողջության պահպանության ստորաբաժանման կառուցվածքը՝ կախված կազմակերպության իրավական-կազմակերպական տեսակից և աշխատողների</p>

	կազմից:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<b>Իմանալ աշխատատեղերի օդերևութաբանական և միկրոկլիմայական պարամետրերի չափման և հսկման միջոցներն ու եղանակները, կատարել համապատասխան չափումներ</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատատեղերի օդերևութաբանական պարամետրերի չափման և հսկման միջոցներն ու եղանակները, կատարում համապատասխան չափումներ,  բ. ճիշտ է ներկայացնում աշխատատեղերի միկրոկլիմայի պարամետրերի չափման և հսկման միջոցներն ու եղանակները և կատարում համապատասխան չափումներ,
<b>Մոդուլի անվանումը «ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-011
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հողի կազմի և հատկությունների, հողի մշակման համակարգերի, աղուտ, ճահճային, քարքարոտ հողերի մելիորացիայի, պարարտանյութերի տեսակների, ցանքաշրջանառությունների, երկրագործության հիմնական համակարգերի և էրոզիայի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել գյուղատնտեսական մշակաբույսերը ճանաչելու, հողի մեխանիկական կազմը որոշելու, պարարտացման նորմերը հաշվարկելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է տիրապետի «Կենսաբանություն» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ հողի ֆիզիկաքիմիական հատկությունները և որոշել դրա մեխանիկական կազմը</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հողի կազմը, հատկությունները, հողի պրոֆիլի ձևավորումը և ձևաբանական հատկանիշները,  բ. ճիշտ է որոշում հողի մեխանիկական կազմը:



<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Իմանալ գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի անհրաժեշտ գործոնները, պայմանները և երկրագործության մեջ նրանց կանոնավորման մեթոդները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում երկրագործության օրենքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ագրոտեխնիկական, գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի պայմանները և երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Իմանալ մոլախոտերի դասակարգումը, հաշվառման մեթոդները և դրանց դեմ պայքարի միջոցառումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դասակարգումը և հաշվառման մեթոդները,</p> <p>բ. ճանաչում է մոլախոտերը արտաքին տեսքով,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների ագրոտեխնիկական և քիմիական մեթոդները և դրանց զուգակցումը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<b>Իմանալ պարարտանյութերի դասակարգումը, կիրառումը և հաշվարկել դրանց օգտագործման նորմերը</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում պարարտանյութերի դասակարգումը, տեսակները և դրանց կիրառման բնագավառներն ու եղանակները,</p> <p>բ. ճիշտ է հաշվարկում պարարտանյութերի օգտագործման նորմերը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<b>Իմանալ մշակաբույսերի առանձնահատկություններից բխող հողի մեխանիկական մշակման հիմնական տեխնոլոգիական գործընթացները, դրանց կատարման տեխնիկան</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում հողի մեխանիկական մշակման հիմնական տեխնոլոգիական գործընթացները և դրանց կատարման տեխնիկան,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում մշակաբույսերի առանձնահատկություններից կախված՝ հողի մշակման տեխնոլոգիական գործընթացների առանձնահատկությունները:</p>

Ուսումնառության արդյունք 6	Իմանալ գյուղատնտեսական գոտու ցանքաշրջանառությունները, ժամանակակից երկրագործության համակարգերը և դրա բաղկացուցիչ մասերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ցանքաշրջանառությունները և երկրագործության համակարգերը՝ ըստ գյուղատնտեսական գոտիների,  բ. ճիշտ է ներկայացնում ժամանակակից երկրագործության համակարգերի բաղկացուցիչ մասերը:
<b>Մոդուլի անվանումը «ԲՈՒՄԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆՁԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-012
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոտեխնիկայի, շրջանացված սորտերի, դրանց կենսաբանական և մշակության առանձնահատկությունների, գյուղատնտեսական մեքենաների և գործիքների նկատմամբ առաջադրվող պահանջների, կարևորագույն բանջարանոցային բույսերի կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել այդ մշակաբույսերը ճանաչելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է տիրապետի «Կենսաբանություն» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման ագրոտեխնիկան, շրջանացված սորտերի և նրանց կենսաբանական և մշակության առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման ագրոտեխնիկան,  բ. ճիշտ է ներկայացնում շրջանացված սորտերի և նրանց կենսաբանական և մշակության առանձնահատկությունները:

Ուսումնառության արդյունք 2	Իմանալ գյուղատնտեսական մեքենաների և գործիքների նկատմամբ առաջադրվող պահանջները և գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մշակաբույսերի մշակման մեքենաների և գործիքների նկատմամբ առաջադրվող պահանջները բ. ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության առանձնահատկությունները,
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ կարևորագույն բանջարանոցային բույսերի կենսաբանական առանձնահատկությունները և ճանաչել գյուղատնտեսական մշակաբույսերը՝ ըստ դրանց սերմերի, ծիլերի և պտուղների:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է շարադրում կարևորագույն բանջարանոցային բույսերի կենսաբանական առանձնահատկությունները, բ. ճանաչում է գյուղատնտեսական մշակաբույսերը՝ ըստ դրանց սերմերի, ծիլերի և պտուղների:
<b>Մոդուլի անվանումը «ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-013
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ անասնաբուծության նշանակության և վարման համակարգի, գյուղատնտեսական կենդանիների ծագման, ցեղերի աճի ու զարգացման օրինաչափությունների, մթերատվության վրա ազդող գործոնների, բուժման մեթոդների, կերակրման հիմունքների, կերերի պատրաստման պահանջների, անասնաբուծության հիմնական ճյուղերի վարման առանձնահատկությունների, մթերքի և հումքի արտադրության արդյունավետության բարձրացման ուղիների և կենդանիների պահվածքի տեխնոլոգիական լուծումների ու սանիտարահիգիենիկ պահանջների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է տիրապետի «Կենսաբանություն» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:

<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ անասնաբուծության վարման համակարգը, կենդանիների ծագման, ցեղերի աճի ու զարգացման օրինաչափությունները</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում անասնաբուծության վարման համակարգը, բ. ճիշտ է ներկայացնում կենդանիների ծագման, ցեղերի աճի ու զարգացման օրինաչափությունները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Իմանալ մթերատվության վրա ազդող գործոնները, կերակրման հիմունքները, կերերի պատրաստման պահանջները</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մթերատվության վրա ազդող գործոնները, բ. ճիշտ է ներկայացնում կենդանիների կերակրման հիմունքները և կերերի պատրաստման պահանջները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Իմանալ անասնաբուծության հիմնական ճյուղերի վարման առանձնահատկությունները, մթերքի և հումքի արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները և կենդանիների պահվածքի տեխնոլոգիական լուծումներն ու սանիտարահիգիենիկ պահանջները</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում անասնաբուծության հիմնական ճյուղերի վարման առանձնահատկությունները, մթերքի և հումքի արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները, բ. առաջարկում է կենդանիների պահվածքից բխող տեխնոլոգիական ճիշտ լուծումներ, գ. ճիշտ է ներկայացնում կենդանիների խնամքի սանիտարահիգիենիկ պահանջները:
<b>Մոդուլի անվանումը «ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՎՏՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-014
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլների և տրակտորների, ավտոտրակտորային շարժիչների դասակարգման և ընդհանուր կառուցվածքի, աշխատանքի սկզբունքի, շարժիչների հիմնական մեխանիզմների և համակարգերի վերաբերյալ, ինչպես նաև շարժիչը գործարկելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ

Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-001 «Գծագրություն», 04-09-002 «Ընդհանուր էլեկտրատեխնիկա», 04-09-003 «Կիրառական մեխանիկա», ԳՄՇՆ 04-09-004 «Նյութագիտություն», 04-09-005 «Հիդրավիկա» և 04-09-006 «Ջերմատեխնիկա» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ ավտոմոբիլների, տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը և դրանց հիմնական մասերի նշանակությունը:</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների և տրակտորների դասակարգման սկզբունքները, բ. ճիշտ է տարբերակում տարբեր մակնիշների ավտոմոբիլները, տրակտորները և ինքնագնաց շասսիները, գ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների, տրակտորների և ինքնագնաց շասսիների ընդհանուր կառուցվածքը, դ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների և տրակտորների հիմնական մասերի նշանակությունը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Իմանալ ավտոմոբիլային, տրակտորային և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների ներքին այրման շարժիչների տեսակները, աշխատանքի սկզբունքները, կառուցվածքային առանձնահատկությունները</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ներքին այրման շարժիչների դասակարգումը, դրանց ընդհանուր կառուցվածքը, շարժիչը բնութագրող ցուցանիշների հիմնական մեծություններն ու հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում կարբյուրատորային, դիզելային և վառելանյութի ներարկումով շարժիչների աշխատանքի առանձնահատկությունները, դրանց համեմատական գնահատականը, գ. ճիշտ է ներկայացնում դիզելային և կարբյուրատորային շարժիչների աշխատանքային ցիկլերը:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Գործարկել շարժիչը</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է գործարկում դիզելային շարժիչը, բ. ճիշտ է շարադրում շարժիչի գործարկման ժամանակ անվտանգության տեխնիկայի պահանջները:

<b>Մոդուլի անվանումը «ԱԿՏՈՍՈՒԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-015
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ տրակտորի շարժիչի հիմնական մեխանիզմների և համակարգերի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել դրանք քանդելու, հավաքելու և կարգավորելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Կատարել շարժիչի շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի քանդում, հավաքում և կարգավորում</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի շարժական և անշարժ մեքենամասերից յուրաքանչյուրի նշանակությունը, աշխատանքը և ընդհանուր կառուցվածք,</p> <p>բ. ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի գլանամխոցային խումբը,</p> <p>գ. ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի շարժաթևային խումբը,</p> <p>դ. ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի ծնկաձև լիսեռը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Կատարել շարժիչի գազաբաշխիչ մեխանիզմի քանդում, հավաքում և կարգավորում</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում և բացատրում գազաբաշխիչ մեխանիզմի նշանակությունը տարատեսակները, աշխատանքը,</p> <p>բ. ճիշտ է բացատրում փականային գազաբաշխիչ մեխանիզմի մեքենամասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է քանդում և հավաքում գազաբաշխիչ մեխանիզմը,</p>

	<p>դ. ճիշտ է կարգավորում բաշխիչ լիսեռի առանցքային տեղաշարժը, կափույրների բացակները և ճնշանվազման մեխանիզմը,</p> <p>ե. ճիշտ է տեղադրում գազաբաշխիչ փոկանիվները (աստղանիվները) և ստուգում գազաբաշխման փուլերը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Իմանալ կարբյուրատորային, դիզելային և վառելիքի ներարկումով շարժիչների սնման համակարգերի աշխատանքի սկզբունքները և կառուցվածքային առանձնահատկությունները, կարգավորել այդ համակարգերը</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում սնման համակարգի նշանակությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կարբյուրատորային, դիզելային և վառելիքի ներարկումով սնման համակարգերի աշխատանքի սկզբունքները և կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում սնման յուրաքանչյուր համակարգի հիմնական մասերի նշանակությունը և դրանց ընդհանուր կառուցվածքը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ավտոտրակտորային շարժիչների համար օգտագործվող վառելանյութերի դասակարգումը և նրանց հատկությունները,</p> <p>ե. ճիշտ է ստուգում վառելիքի զտիչի տեխնիկական վիճակը, հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա,</p> <p>զ. ճիշտ է կարգավորում կարբյուրատորը,</p> <p>է. ճիշտ է որոշում վառելիքի մատուցման մոմենտը,</p> <p>ը. ճիշտ է ստուգում և կարգավորում բոցամուղները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<b>Իմանալ ավտոտրակտորային շարժիչների հովացման համակարգերի նշանակությունը, աշխատանքը և կառուցվածքը, կարգավորել այդ համակարգերը</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում հովացման համակարգի նշանակությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հեղուկային և օդային հովացման համակարգերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ստուգում ջրի պոմպի և օդափոխիչի տեխնիկական վիճակը, քանդում և հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա,</p>

	դ. ճիշտ է ստուգում հովացման համակարգի սարքերի տեխնիկական վիճակը:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<b>Իմանալ ավտոտրակտորային շարժիչների յուղման համակարգերի նշանակությունը, աշխատանքը և կառուցվածքը, ստուգել այդ համակարգերը</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում յուղման համակարգի նշանակությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում մեքենամասերի յուղման առանձնահատկությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում յուղման համակարգի յուրաքանչյուր մասի նշանակությունը, աշխատանքը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>դ. ճիշտ է ստուգում յուղի պոմպի և յուղի զտիչի տեխնիկական վիճակը, հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում տրակտորների համար օգտագործվող յուղերի և քսայուղերի դասակարգումը և նրանց հատկությունները:</p>
<b>Մոդուլի անվանումը «ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-016
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլի, տրակտորի և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների էլեկտրական սարքավորումների ընդհանուր կառուցվածքի, աշխատանքի, դրանց հիմնական խմբերի վերաբերյալ և ձևավորել դրանց շահագործման ընթացքում անսարքությունները բացահայտման և վերացման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:



<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ ավտոտրակտորային շարժիչների վառոցքի համակարգի նշանակությունը, աշխատանքը և կառուցվածքը</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում վառոցքի համակարգի նշանակությունը և աշխատանքը, բ. ճիշտ է ներկայացնում վառոցքի համակարգի հիմնական մասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Իմանալ ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների էլեկտրական սարքավորումների նշանակությունը, աշխատանքը, հիմնական կարգավորումները:</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում էլեկտրական սարքավորումների հիմնական խմբերը՝ հոսանքի աղբյուրներ, վառոցքի համակարգ, լուսավորման և լուսազդանշանային համակարգ, ներկայացնելով դրանց նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրական սարքավորումների աշխատանքի սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում էլեկտրական սարքավորումների հիմնական կարգավորման սկզբունքները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Չանել և տեղադրել ավտոմոբիլի կամ տրակտորի գեներատորը, կարգավորել շարժափոկի ձգվածությունը</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է շարադրում գեներատորի կառուցվածքը և աշխատանքը, բ. ճիշտ է հանում և տեղադրում գեներատորը, գ. ճիշտ է կարգավորում շարժափոկի ձգվածությունը:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<b>Ստուգել և սպասարկել մարտկոցային կուտակիչները, կարգավորել վառոցքի մոմենտը, լուսավորման և լուսազդանշանային համակարգը</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է շարադրում մարտկոցային կուտակիչների սպասարկման կարգը, բ. ճիշտ է ստուգում մարտկոցային կուտակիչների տեխնիկական վիճակը հատուկ գործիքների օգնությամբ, գ. ճիշտ է շարադրում վառոցքի մոմենտի ազդեցությունը շարժիչի աշխատանքի վրա, դ. ճիշտ է կարգավորում վառոցքի մոմենտը,

	<p>ե. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների լուսավորման և լուսազդանշանային համակարգի կառուցվածքը,</p> <p>զ. ճիշտ է կարգավորում ավտոմոբիլի, տրակտորի կամ գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի լապտերի լույսը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<b>Հայտնաբերել և պարզ եղանակներով վերացնել ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների էլեկտրասարքավորումների հիմնական անսարքությունները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում էլեկտրասարքավորումների հնարավոր հիմնական անսարքությունները,</p> <p>բ. հայտնաբերում է հոսանքի աղբյուրների հիմնական պարզագույն անսարքությունները,</p> <p>գ. հայտնաբերում է վառոցքի համակարգի հիմնական պարզագույն անսարքությունները,</p> <p>դ. հայտնաբերում է լուսավորման և լուսազդանշանային համակարգի հիմնական պարզ անսարքությունները:</p>
<b>Մոդուլի անվանումը «ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՆԵՐԸ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-017
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլի, տրակտորի և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տրանսմիսիաների նշանակության, կցորդման ազույցների և միջանկյալ միացումների, տարբեր մակնիշների ավտոմոբիլների և տրակտորների փոխանցումների տուփերի կառուցվածքի, տրակտորների հետևի կամրջակի վերաբերյալ և ձևավորել այդ մեխանիզմները շահագործելու ու խնամքն իրականացնելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:

<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ ավտոմոբիլների և տրակտորների տրանսմիսիաների տեսակները, կառուցվածքը, աշխատանքի առանձնահատկությունները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների տրանսմիսիաների նշանակությունը, տեսակները և աշխատանքը:</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում տրակտորների տրանսմիսիաների նշանակությունը, տեսակները և աշխատանքը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Իմանալ ավտոմոբիլների և տրակտորների կցորդման ազուլցների նշանակությունը, աշխատանքը, հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում կցորդման ազուլցի (կցորդիչի) նշանակությունը և տեսակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կցորդման ազուլցի (կցորդիչի) յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է բացատրում կցորդման ազուլցի (կցորդիչի) հիմնական կարգավորումները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Չանել և տեղադրել ավտոմոբիլի կամ տրակտորի փոխանցումների փոփոխման և բաշխիչ տուփերը</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում փոխանցումների փոփոխման տուփի նշանակությունը և տեսակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում աստիճանավոր և անաստիճան փոխանցման տուփերի հիմնական մեքենամասերի (մասերի) նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է բացատրում բաշխիչ տուփի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, դրա առանձին մեքենամասերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>դ. ճիշտ է հանում և տեղադրում ավտոմոբիլի կամ տրակտորի փոխանցումների փոփոխման կամ բաշխիչ տուփերը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<b>Իմանալ ավտոմոբիլի և տրակտորի տանող կամրջակի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, առջևի տանող և ղեկավարվող անիվների հաղորդակների կառուցվածքային առանձնահատկությունները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում տանող կամրջակի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում տանող կամրջակի յուրաքանչյուր մասի (մեքենամասի) նշանակությունը և ընդհանուր</p>

	<p>կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է բացատրում առջևի տանող և ղեկավարվող անիվների հաղորդակների կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում հավասար և անհավասար անկյունային արագության կարդանային փոխանցումների յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<b>Ստուգել և իրականացնել ավտոմոբիլի կամ տրակտորի տրանսմիսիայի առանձին հանգույցների խնամքը և կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տրանսմիսիաների տեխնիկական սպասարկման աշխատանքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տրանսմիսիաների աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները,</p> <p>գ. հայտնաբերում և պարզ եղանակներով վերացնում է ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տրանսմիսիաների հիմնական անսարքությունները:</p>
<b>Մոդուլի անվանումը «ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԱՅԻՆ ՄԱՍԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-018
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլների, թրթուրավոր և անիվավոր տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների ընթացքային մասի և ղեկավարման մեխանիզմների, արգելակման համակարգերի նշանակության, կառուցվածքի ու աշխատանքի մասին և ձևավորել այդ մեխանիզմները շահագործելու, դրանց կարգավորման ու խնամքն իրականացնելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» և ԳՄՇՆ 04-09-017 «Ավտոմոբիլների և տրակտորների տրանսմիսիաները» մոդուլները:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների կախոցների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում կախոցների նշանակությունը, տեսակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կախյալ կախոցի ընդհանուր կառուցվածքը և թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում անկախ կախոցի ընդհանուր կառուցվածքը և թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում կախոցի տեխնիկական սպասարկման աշխատանքները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում կախոցի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Իմանալ ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների անիվների և դողերի կառուցվածքային առանձնահատկությունները և կատարել դրանց խնամքն ու հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում անիվների և դողերի կառուցվածքը և թվարկում մեքենամասերը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում անիվների յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում անիվների և դողերի տեխնիկական սպասարկման աշխատանքները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլի շահագործման ընթացքում անիվների և դողերի հիմնական անսարքությունները և կատարում համապատասխան կարգավորումները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Իմանալ թրթուրավոր տրակտորների ընթացքային մասի կառուցվածքը և կատարել դրանց հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում թրթուրավոր տրակտորների կառուցվածքը և թվարկում մեքենամասերը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում թրթուրավոր շարժասարքի յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր</p>

	<p>կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում թրթուրավոր շարժասարքի տեխնիկական սպասարկման աշխատանքները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում թրթուրավոր տրակտորի շահագործման ընթացքում թրթուրավոր շարժասարքի հիմնական անսարքությունները և կատարում համապատասխան կարգավորումները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<b>Իմանալ ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների ղեկային վարման տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների ղեկային վարման նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների ղեկային մեխանիզմի նշանակությունը, տեսակները, թվարկում հիմնական մեքենամասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների ղեկային շարժաքերի նշանակությունը, տեսակները, թվարկում հիմնական մեքենամասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ղեկային վարման տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները, կատարում համապատասխան կարգավորումները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<b>Իմանալ թրթուրավոր տրակտորների շրջադարձի մեխանիզմների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում թրթուրավոր տրակտորների շրջադարձի մեխանիզմների նշանակությունը, տարատեսակները, համեմատական գնահատականը և դրանց աշխատանքի սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում թրթուրավոր տրակտորների շրջադարձային ագույցների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, թվարկում հիմնական մեքենամասերը և դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում թրթուրավոր տրակտորների պլանետարային տիպի շրջադարձային մեխանիզմների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, թվարկում հիմնական մեքենամասերը և դրանցից</p>

	<p>յուրաքանչյուրի նշանակությունը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում թրթուրավոր տրակտորների շրջադարձի մեխանիզմների տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները, կատարում համապատասխան կարգավորումները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	<b>Իմանալ ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների արգելակային համակարգերի նշանակությունը, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում արգելակային համակարգի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, տեսակները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում արգելակային մեխանիզմի նշանակությունը, տեսակները, թմբուկային և սկավառակային արգելակային մեխանիզմների յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում արգելակային հաղորդակի տեսակները և կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում հիդրավլիկ արգելակային հաղորդակի հիմնական մասերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում պնևմատիկ արգելակային հաղորդակի հիմնական մասերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում արգելակային համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները, կատարում համապատասխան կարգավորումները:</p>
<b>Մոդուլի անվանումը «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԵՐԸ, ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԹԱՓՔԵՐԸ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-019
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ թրթուրավոր և անիվավոր տրակտորների օժանդակ մեխանիզմների ու սարքերի, ավտոմոբիլների թափքերի նշանակության, կառուցվածքի ու աշխատանքի մասին և ձևավորել այդ մեխանիզմներն ու սարքերը շահագործելու, դրանց կարգավորման կարողություններ:

Մոդուլի տևողությունը	18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» և ԳՄՇՆ 04-09-017 «Ավտոմոբիլների և տրակտորների տրանսմիսիաները» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ տրակտորների օժանդակ մեխանիզմների, հզորության անջատման լիսեռի և սարքերի նշանակությունը, կառուցվածքն ու աշխատանքը և դրանց կարգավորումները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տրակտորների օժանդակ մեխանիզմների, հզորության անջատման լիսեռի և սարքերի նշանակությունը, կառուցվածքն ու աշխատանքը, թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,  բ. ճիշտ է ներկայացնում տրակտորների հզորության անջատման լիսեռի և սարքերի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները և իրականացնում դրանց հիմնական կարգավորումները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Իմանալ տրակտորների հիդրավլիկ կախման համակարգի նշանակությունը, կառուցվածքը, կատարել դրանց խնամքն ու հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տրակտորների հիդրավլիկ կախման համակարգի նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքը, թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,  բ. ճիշտ է իրականացնում տրակտորների հիդրավլիկ կախման մեխանիզմի խնամքն ու կարգավորումները,  գ. ճիշտ է ներկայացնում տրակտորների հիդրավլիկ կախման համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Իմանալ ավտոմոբիլների թափքերի տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները:</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում թափքերի նշանակությունը, տեսակները և ընդհանուր կառուցվածքը,



	<p>բ. ճիշտ է ներկայացնում շրջանակի և թափքի հիմնական մասերից յուրաքանչյուր նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում թափքերի տեխնիկական սպասարկման աշխատանքները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում թափքերի հիմնական անսարքությունները:</p>
<b>Մոդուլի անվանումը «ՀՈՂԱՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-020
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հողամշակման մեքենաների կառուցվածքի, աշխատանքի տեխնոլոգիական պրոցեսի մասին և ձևավորել դրանք աշխատանքին նախապատրաստելու, դաշտում կարգավորելու, աշխատանքի ընթացքում վարելու, տեխնիկական սպասարկում և պահպանում իրականացնելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը», ԳՄՇՆ 04-09-011 «Երկրագործության հիմունքները», ԳՄՇՆ 04-09-012 «Բուսաբուծության և բանջարաբուծության հիմունքները» ԳՄՇՆ 04-09-013 «Անասնաբուծության հիմունքները» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ գութանների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում գութանների դասակարգումը, տեսակները, կառուցվածքն ու աշխատանքը, թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>բ. ճիշտ է նախապատրաստում գութանը աշխատանքի համար,</p> <p>գ. ճիշտ է իրականացնում գութանների կարգավորումները:</p>

Ուսումնառության արդյունք 2	Իմանալ հողի մակերեսային մշակման մեքենաների դասակարգումը, կառուցվածքները, աշխատանքը, անվտանգության կանոնները և կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և կարգավորումները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում հողի մակերեսային մշակման մեքենաների դասակարգումը, կառուցվածքները, աշխատանքը և կառուցվածքային առանձնահատկությունները, թվարկում դրանց հիմնական մասերը, յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>բ. ճիշտ է նախապատրաստում ցաքանները և կուլտիվատորները աշխատանքի համար,</p> <p>գ. ճիշտ է իրականացնում ցաքանների և կուլտիվատորների կարգավորումները:</p>
<b>Մոդուլի անվանումը «ՑԱՆԻՉ, ՏՆԿԻՉ, ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ԲՈՒՅՄԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-021
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ցանիչ, տնկիչ, պարարտացման և բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների կառուցվածքի, աշխատանքների տեխնոլոգիական պրոցեսների մասին և ձևավորել դրանք աշխատանքին նախապատրաստելու, դաշտում կարգավորելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը», ԳՄՇՆ 04-09-011 «Երկրագործության հիմունքները», ԳՄՇՆ 04-09-012 «Բուսաբուծության և բանջարաբուծության հիմունքները» ԳՄՇՆ 04-09-013 «Անասնաբուծության հիմունքները» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:

<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ հատիկաշարքային ցանիչների և տնկիչների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումն աշխատանքի համար և իրականացնել հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում հատիկաշարքային ցանիչների և տնկիչների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հատիկաշարքային ցանիչների և տնկիչների հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում ցանիչը աշխատանքի համար,</p> <p>դ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում տնկիչը աշխատանքի համար:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Իմանալ պարարտացման և սնուցման մեքենաների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումն աշխատանքի համար և իրականացնել հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում պարարտացման մեքենաների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում պարարտացման մեքենաների հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>գ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում պարարտացման մեքենան աշխատանքի համար:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Իմանալ բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p>

	գ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում սրսկիչը աշխատանքի համար:
<b>Մոդուլի անվանումը «ԲԵՐՔԱՅԱՎԱՔԻ ԵՎ ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-022
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաների կառուցվածքի, աշխատանքի տեխնոլոգիական պրոցեսի մասին և ձևավորել դրանք աշխատանքին նախապատրաստելու, դաշտում կարգավորելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը», ԳՄՇՆ 04-09-011 «Երկրագործության հիմունքները», ԳՄՇՆ 04-09-012 «Բուսաբուծության և բանջարաբուծության հիմունքները» ԳՄՇՆ 04-09-013 «Անասնաբուծության հիմունքները» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ հնձիչ մեքենաների, դրանց կտրող ապարատների դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում հնձիչ մեքենաների դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հնձիչ մեքենաների կտրող ապարատների դասակարգումը, կառուցվածքը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը, անվտանգության կանոնները,</p> <p>գ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում կտրող ապարատը աշխատանքի համար:</p>

<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p><b>Իմանալ փոցիների, քարշանների, հավաքող մամլիչների, կապոցահավաքիչների տեսակները, կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները</b></p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում փոցիների և քարշանների նշանակությունը, դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հավաքող մամլիչների նշանակությունը, դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում կապոցահավաքիչների նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>դ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հավաքիչ մամլիչը աշխատանքի համար,</p> <p>ե. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում կապոցահավաքիչը աշխատանքի համար:</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p><b>Իմանալ հացահատիկահավաք կոմբայնների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները</b></p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>ա. ճիշտ է ներկայացնում հացահատիկահավաք կոմբայնի հնձիչի, դրա առանձին հանգույցների ու մասերի (կտրող ապարատ, վիլակ, շնեկ) նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հացահատիկահավաք կոմբայնի կալսիչի, դրա առանձին հանգույցների ու մասերի (ընդունող բիտեր, կալսիչ ապարատ, ծղոտացնիչ, բունկեր, բարդոցիչ) նշանակությունը, դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>գ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հացահատիկահավաք կոմբայնի հնձիչը աշխատանքի համար,</p> <p>դ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հացահատիկահավաք կոմբայնի կալսիչը աշխատանքի համար:</p>

<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<b>Իմանալ եզիպտացորենահավաք կոմբայնների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում եզիպտացորենի բերքահավաքի ձևերը և ագրոտեխնիկական պահանջները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում եզիպտացորենահավաք կոմբայնի, դրա առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>գ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում եզիպտացորենահավաք կոմբայնը աշխատանքի համար:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<b>Իմանալ կարտոֆիլահավաք մեքենաների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում կարտոֆիլի բերքահավաքի ձևերը և ագրոտեխնիկական պահանջները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կարտոֆիլահանիչի, դրա առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում կարտոֆիլահավաք կոմբայնի, դրա առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>դ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում կարտոֆիլահանիչը աշխատանքի համար:</p>
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	<b>Իմանալ ճակնդեղահավաք մեքենաների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները:</b>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում շաքարի ճակնդեղի բերքահավաքի ագրոտեխնիկական պահանջները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում արմատահատման տիպի ճակնդեղահավաք կոմբայնի, դրա առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ճակնդեղի տերևուքի նախնական կտրմամբ ճակնդեղահավաք մեքենաների, դրանց առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p>

	դ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում արմատահատման տիպի ճակնդեղահավաք կոմբայնն աշխատանքի համար:
<b>Մոդուլի անվանումը «ԲԵՐՔԱՅԱՎԱՔԻՑ ՀԵՏՈ ՀԱՏԻԿԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-023
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ բերքահավաքից հետո հատիկի մշակման մեքենաների կառուցվածքի, աշխատանքի տեխնոլոգիական պրոցեսի մասին և ձևավորել այդ մեքենաները կարգավորելու և աշխատանքի նախապատրաստելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը», ԳՄՇՆ 04-09-011 «Երկրագործության հիմունքները», ԳՄՇՆ 04-09-012 «Բուսաբուծության և բանջարաբուծության հիմունքները» ԳՄՇՆ 04-09-013 «Անասնաբուծության հիմունքները» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Իմանալ հատիկամաքրիչ և հատիկատեսակավորիչ մեքենաներին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները, հատիկների մաքրման ու տեսակավորման սկզբունքները</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հատիկամաքրիչ և հատիկատեսակավորիչ մեքենաներին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները, բ. ճիշտ է ներկայացնում բերքահավաքից հետո հատիկների մաքրման ու տեսակավորման սկզբունքները, գ. ճիշտ է շարադրում բերքահավաքից հետո հատիկի մշակման մեքենաների դասակարգումը, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<b>Իմանալ հատիկամաքրիչների տեսակները, կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հատիկամաքրիչ մեքենաների, դրանց առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը,

	կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, բ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հատիկամաքրիչ մեքենաները աշխատանքի համար:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<b>Իմանալ հատիկատեսակավորիչ մեքենաների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումն աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հատիկատեսակավորիչ մեքենաների, դրանց առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, բ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հատիկատեսակավորիչ մեքենաները աշխատանքի համար:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<b>Իմանալ հատիկաչորանոցների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները:</b>
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հատիկաչորանոցների տեսակները, կառուցվածքը, դրանց առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, բ. ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հատիկաչորանոցները աշխատանքի համար:
<b>Մոդուլի անվանումը «ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՇԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»</b>	
Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 04-09-024
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) ռացիոնալ համալրման, ագրեգատի կազմի ճշտման, ՄՏԱ-ի շահագործական ցուցանիշների որոշման, գյուղատնտեսությունում տրանսպորտի դերի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել ՄՏԱ արդյունավետ շահագործման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 04-09-014, ԳՄՇՆ 04-09-015, ԳՄՇՆ 04-09-016, ԳՄՇՆ 04-09-017, ԳՄՇՆ 04-09-018, ԳՄՇՆ 04-09-019, ԳՄՇՆ 04-09-020, ԳՄՇՆ 04-09-021, ԳՄՇՆ 04-09-022, ԳՄՇՆ 04-09-023 մոդուլները:



Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<b>Համալրել USU և ճշտել ագրեգատի կազմը</b>
